կան սրբատառ կոնդակը, որով Աղդիս Քանանայպետը հաստատում էր Թանդարանին կից հիմնուած «Ղուկասեան մրցանակաբաշխութեան» կանոնադրութիւնը և որն առաջ ենք բերում ստորև։ Վեհափառ Կաթուղիկոսը այնուհետև պահպանիչով փակեց հանդէսը։

Հանդիսին ներկայ էին Թանդարանի հիմնադիր մեծ. պ. Աւետիս Ղուկասեանը, Թանդարանի վարչութեան անդամներ և այլք։

Նոյն օրը, Թանդարանի բացման առթիւ, Վեհ. Հայրապետը հիւրասիրուեցաւ Ղուկասեանի հիւրընկալ յարկի տակ, որին ներկայ էին իւր բոլոր շքախումբը, Թանդարանի վարչութեան անդամներ, մի քանի գրագէտներ և այլ հասարակութիւն։

ՂՈՒԿԱՍԵԱՆ ՄՐՑԱՆԱԿԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹԻՒՆ

ՄԿՐՏԻՉ Ծառայ Քրիստոսի և Անհասանելի կամօքն Աստուծոյ Եպիսկոպոսապետ և Կաթուղիկոս Ամենայն Հայոց Ծայրագոյն Պատրիարք Համազգական Նախամեծար Աթոռոյ Ա. Լրարատեան Առաքելական Մայր Եկեղեցւոյ Սրբոյ Կաթուղիկէ Էջմիածնի. Պատուարժան Անդամոց մնալուն Ցանձնաժողովոյ կրօնա-պատմական Թանդարանի Վանաց աւագ Եկեղեցւոյ Հայոց Ցիխիսայ, կառուցելոյ ի մնծարգոյ պ. Աւետիքայ Բ. Ղուկասեան, հարազատիցդ Մայր Աթոռոյս նուիրեմք ողջոյն և օրհնութիւն Հայրապետական։

Ի յայտարար գրութենէ Ցանձնաժողովոյդ՝ մատուցելոյ Մեզ յ30-ն Նոյեմբերի անցելոյ ամի, հաւաստի եղաք, զի բարեպաշտօն պ. Աւետիք Բ. Ղուկասեան ի 20-ն յուլիսի նոյն ամի գրութեամբ յանուն Դորին, որպէս և Մեր, նուիրեալ է ի տարին հինգ հարիւր ռուբլիս առ ի յատկացուցանել մրցանակի հայերէն երկասիրութեանց, զորպիսի գումարն մշտնջենապէս ապահովեալ է կտակաւ իւրով և որոյ գործադրութիւն իսկ յանձնեալ է Ցանձնաժողովոյդ։ Արդ՝ ի նկատ առեալ Մեր զարժանին գովութեան զնպատակն պ. Նուիրատուին և նախաձեռնողին զայն կարևոր հաստատութիւն և կտակ. կարևոր համարիմք ասսու Հայրապետական Կոնդակաւ Մերով որոշել առ

այդ բաշխումն մրցանակի դնեմեսալ կանոնս ի պահպանութիւն ապագայ ժամանակաց և ի կատարումն, որք են։

Ա. Աւետիս Ղուկասեանի նուիրաբերութեամբ հաստատուած մրցանակը կը կոչուի «Ղուկասեան մրցանակ» լանուն նուիրաբերողի։

Բ.—Մրցանակը կը տրուի ամեն տարի Ապրիլի 7 ին ս. Կուսի Աւետման տօնին։

Գ.—Ղուկասեան մրցանակի նիւթը պէտք է պատկանի հայ լեզուի, հայ դպրութեան կամ հայ պատմութեան ճիւղերին. այն է՝ հայոց լեզուի և դրականութեան հետազօտութիւն, հին հայ մատենագիրների թարգմանութիւն լուսաբանութիւններով կամ բանասիրական քննադատութիւններով ճոխացրած, աղդային կամ եկեղեցական պատմութեան լուսաբանուած հատուածներ, հայաբնակ դաւառների աշխարհագրական տեղագրութիւն, աղդային գեղարուեստի հետազօտութիւն, հայ օրէնսդիտութեան կամ կանոնագիտութեան վերաբերեալ տեսութիւններ և այլն։

Դ.—Մրցանակի չեն կարող ներկայացուիլ. 1. օտար լեզուներից թարգմանութիւններ. 2. դասագրքեր. 3. մի անդամ արդէն որևէ աղդային հաստատութիւնից վարձատրուած երկեր. 4. հին մատենագրութեանց պարզ տպագրութիւններ. 5. մրցման ժամանակից երկու տարի առաջ տպագրուած գործեր։

Ե.—Մրցանակի կարող է մասնակցել ամեն անձ, հայ կամ օտարազգի, բացի դրական ցանձնաժողովի անդամներից։

Զ.—Ներկայացուած գործերը պէտք է հայերէն լինին՝ դրաբար կամ աշխարհաբար, ձեռագիր կամ տպուած. տպագիրները հնդական. իսկ ձեռագիրները մէկ օրինակ, բայց շատ մաքուր գրուած։

Է.—Ցիշեալ պայմանների համաձայն պատրաստուած երկասիրութիւնները պէտք է մրցանակի թուականից հինգ ամիս առաջ ուղարկուին մրցանակի ցանձնաժողովին, որ քննութեան ենթարկուին. հակառակ դէպքում կը մնան մինչև միւս բաշխումը։

Ը.—Ղուկասեան մրցանակի գործադրութիւնը, նուիրաբերողի ցանկութեամբ, լանձնուած է թանգարանի Մնալուն ցանձնաժողովին, որ կազմուած է մի եկեղեցական և երեք աշխարհական անդամներից, թեմի Առաջնորդի նախագահու-

թեամբ, և ոչ ուրիշ հոգևորականի լինի նա կառավարիչ կամ նախանդամ Տիխխսում. Ցանձնաժողովի անդամները նշանակուած են ցմահ, իսկ որևէ անդամի մահից յետոյ նորա փոխարէն ընտրւում և նշանակւում է այլը Հայրապետի կոնդակով։

Թ.—Ցանձնաժողովը պիտի կատարէ ներկայացուած երկասիրութեանց նախնական քննութիւնը, եթէ մրցման պայմաններին յարմար գտնէ՝ կը լանձնէ մասնագէտ և կարող անձանց քննութեան, որոնք կարող են լինել թէ Ցանձնաժողովի անդամներից և թէ արտաքոյ նոցա, նոցա տեղեկագիրներն ընդունելով՝ Ցանձնաժողովը լրացնում է քննութիւնը և վերջնաբար որոշում մրցանակը։

Ժ. Մրցանակի հինգ հարիւր ռուբլին պէտք է ամբողջապէս տալ արժանաւոր երկասիրութեան։

ԺԱ.—Եթէ իւր ժամանակին չներկայացուի որևէ աշխատութիւն և կամ ներկայացուածները մրցանակի արժանի չլինին, մրցանակի գումարը պիտի գործ դնուի նախնեաց ընտիր մատենագրութեանց տպագրութեան վերայ, որպիսի հրատարակութեանց եկամուտը յատկացնւում է Թանգարանին։

ԺԲ.—Մրցանակի պայմանների մասին պէտք է կանխապէս յայտարարել Ռուսիայի և արտասահմանի լրագրներում, իսկ մրցանակաբաշխութեան հետևանքի մասին լանձնաժողովը հրապարակաւ հաչիւ է տալիս տպագրութեամբ և իւրաքանչիւր տարի զեկուցում է ներկայացնում Թանգարանի հոլանաւոր Ամենայն Հայոց Վեհափառ Կաթուղիկոսին։

Յետ որոշման կանոնացս աւանդեմք սիրեցեալ որդւոցդ, արդի և ապագայ անդամոց Մնայուն Ցանձնաժողովոյդ ուշիուշով և անկեղծ ոգւով կատարել ճշտութեամբ զհաստատեալ կանոնս, որ կատարելապէս համաձայն է նպատակի ազգասէր բարերար Հիմնադրին։

Եւ մեք օրհնելով զՀիմնադիրն Թանգարանին զոյ. Աւետիսն Բ. Ղուկասեան հանդերձ ընտանեօք և միակ ժառանգաւ, ասեմք «Յիշատակ բարերարին օրհնութեամբ եղիցի»։

Օրհնեալ եղիցին և անդամք Ցանձնաժողովոյն, ոքնողք և վաստակողք յայս մեծ գործ և որք առ լապալն գործիչք և պիտանիք հանդիսանան հաստատութեանս։

Մնամք ի սրտէ օրհնող բարերարաց ազգիս և ցանկա-

ցող ընդ լաւաջադիմութիւն սիրեցեալ զաւակացս Ս. Հօրն Մերոյ Գրիգորի Լուսաւորչի, կամք մեամբ խոնարհ Աթոռակալ Նորին

ՄԿՐՏԻՉ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՑՆ ՀԱՑՈՑ

Տուաւ Կոնդակս Հայրապետական լամբ շնորհաց Փրկչին 1902 ի 24-ն յունուարի և ըստ տոմարիս ՌՃԾԲ ի Հայրապետութեան Մերում Թ. ամի լԱրարատեան Մայր Աթոռ ս. Էջմիածնի ի Վաղարշապատ. Համար 101.

Կ. ՊՕԼՍԻ ԱՄԵՆ. ՊԱՏՐԻԱՐՔԻ ԶՐՋԱԲԵՐԱԿԱՆԸ

Գաւառական որբանոցներու տնողութեան պայմանաժամը կակի լրանալ հետզհետէ և հարկ կը լինի փակել զանոնք մի առ մի, քանի սպառին բարերարներու սահմանած նպաստներն, և դադրին ընդհանուր նուիրատուութիւնք, որոց արդիւնքով երեսուն և չորս որբանոցներ բացուեցան կարօտեալ գաւառներու մէջ։ Այս առժամանակեայ հաստատութիւնք պատրաստարեցին ու խնամեցին չարդ բազմաթիւ անտէր մանուկներ, պատուար կանգնելով կարօտութեան դէմ, որու անմբուռունչ զոհերը պիտի լինէին այդ մանուկներն, եթէ պետական չնորհներու հետ՝ մեր ազգայնոց ձեռնտուութիւնք չ'հասնէին անոնք օգնութեան։

Այլ սակայն այդ որբանոցներուն մէջ կան տակաւին անչափահաս ու կարօտ տղաք, արժանի խնամքի ու պաշտպանութեան, կը գտնուին դեռ շատեր՝ որ չեն աւարտած արհեստն, զոր կուսանին, հայթայթելու համար իրենց ոգեպահիկն. երբ մեկնին որբանոցէն, ուստի հաղիւ թէ գաւառներու մէջ լուսած որբանոցներէ ոմանց փակման լուրն, թախանձագին խնդիրներ կը տեղան ի Պատրիարքարան, երկարաձգելու դեռ անոնց տնողութեան շրջանն և արդիլելու այն բազմաղիմի անպատեհութիւններն, որ կրնան ծագիլ որբերու լքումէն։

Այսպիսի պարագայից առջև փակել լեղակարծ այդ դիմութեան լարկերն և ցիր ու ցան վտարել ու իրենց բաղդին լքանել այդ մատաղատի մանկտին, մանաւանդ ցուրտ ձմեռով, որ պատած է արդէն գաւառներն բուքով ու ձիւնով, կարելի չէր, առանց տագնապելու խղճի խայթէ, առանց ծանր պատասխանատուութեան մ'ենթարկուելու։ Ազգին առջև, որ այնքան մեծ զոհողութիւններ յանձն առած էր թշուառութեան ձեռքէն խլելու համար բաղդին այդ զրկեալներն, միանդա-